Биолог. журн. Армении, 1-2 (**54**), 2002

УДК 581.9

ՆՈՐ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԼՈՐԻՍՏԻԿԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ս.Ա.ԲԱԼՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ, 375063, Երևան

Հայաստանի ֆլորա - ալպիական գոտի – նոր բուսատեսակներ

Կենտրոնական և Հյուսիսային Հայաստանի ֆլորիստիկական շրջանները հանրապետության առավել ուսումնասիրված հատվածներն են [1, 3, 5], սակայն դրանցում առկա ալպիական գոտին մինչև վերջին ժամանակներս հետազոտողների կողմից լիարժեք ուշադրության չի արժանացել: Իմ կողմից կատարված ֆլորիստիկական ուսումնասիրությունները (1988-1989 թթ.) ընդգրկել են Կենտրոնական Հայաստանի Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների, իսկ Հյուսիսային Հայաստանի Փամբակի, Խալաբի, Մուրղուզի և Ջավախքի լեռնաշղթաների, ալպիական գոտին:

Նշված լեռնազանգվածները բուսաբանա-աշխարհագրական շրջանացման համակարգում պատկանում են տարբեր երկրամասերի և ենթաերկրամասերի [4]: Այսպես, Գեղամա լեռնաշղթայի արևմտյան մակրոլանջը ընդգրկված է Հայ-Իրանական երկրամասի հայկական ենթաերկրամասի տարածքում: Նույն երկրամասի Ատրպատական ենթաերկրամասին է պատկանում Վարդենիսի լեռնաշղթայի հարավային մակրոլանջը: Գեղամա լեռների արևելյան, իսկ Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային մակրոլանջերը, ինչպես նաև Հյուսիսային Հայաստանի տարածքում գտնվող բոլոր լեռնազանգվածները ընդգրկված են Կովկասյան երկրամասում: Բացի այդ, ուսումնասիրված լեռնազանգվածները տեղաբաշխված են Հայաստանի ֆլորիստիկական տարբեր շրջաններում: Ջավախքի լեռնաշղթան Վերին Ախուրյանի, Փամբակի, Խալաբի և Մուրղուզի լեռնազանգվածները ամբողջությամբ գտնվում են Իջևանի շրջանում, Գեղամա լեռնաշղթան Գեղամի, Վարդենիսի լեռնաշղթայի հարավային մակրոլանջը Դարալագյազի, իսկ հյուսիսայինը Սևանի ֆլորիստիկական շրջաններում:

Ուսումնասիրությունների ընթացքում նշված ֆլորիստիկական շրջանների համար առաջին անգամ նշվում են 18 տեսակի բարձրակարգ բույսեր:

Հավաքված նյութը պահվում է ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումում (ERE):

Pimpinella grossheimii Schischk. – Հայաստանի տարածքում չափազանց հազվադեպ հանդիպող հիրկանական տեսակ է: ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումում պահպանվում է այս տեսակի հերբարիումային մեկ թերթ, հավաքված 1963 թ. Յա.Ի.Մուլկիջանյանի կողմից Մեղրու շրջանի Լիճք գյուղի շրջակայքից: Իմ կողմից հայտնաբերվել է Դարալագյազի ֆլորիստիկական շրջանում Վարդենիս լեռնագագաթի հարավային մակրոլանջի վրա, ծովի մակարդակից 2700-3000մ բարձրություններում: Աճում է քարացրոններում (չինգիլներում):

Pimpinella nudicaulis Trautv. - Առաջին անգամ է նշվում Վերին Ախուրյանի շրջանի համար: Հայտնաբերվել է Ջավախքի լեռնաշղթայի հարավային վերջավորությունում ծովի մակարդակից 2600-2800 մ բարձրության վրա: Հայ-Ատրպատական տարածաշրջանին բնորոշ այս տեսակը նախկինում հայտնի էր միայն Երևանի և Դարալագյազի ֆլորիստիկական շրջանների համար, իսկ 1987 թ. իմ կողմից հայտնաբերվել է նաև Զանգեզուրի շրջանում [2]:

Didymophysa aucheri Boiss. - Այս ատրպատական տեսակը մինչև այժմ Հայաստանում հայտնի էր միայն Արագած լեռան «խառնարանից» [7]: 1988 թվականին իմ կողմից հայտնաբերվել է Գեղամա լեռնաշղթայի Աղուսարք լեռնահամալիրում ծովի մակարդակից 3300-3400 մ բարձրության վրա: Ինչպես Արագածում, այնպես էլ այստեղ այն աճում է բացառապես խճաքարային լանջերի վրա:

Isatis takhtajanii Avet. - Առաջին անգամ է տրվում Իջևանի շրջանի համար: Հայտնաբերվել է Մայմեխ լեռան վրա (Փամբակի լեռնաշղթա) ծովի մակարդակից 2900մ բարձրությունում: Այս հազվագյուտ տեսակը հայտնի էր Հայաստանի Լոռու և Զանգեզուրի տարածքում: Մեր ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ այն իր ֆիտոցենոտիկ առանձնահատկություններով առավել աչքի է ընկնում Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում:

Murbeckiella huetii (Boiss.) Rothm. - Նոր տեսակ է Վերին Ախուրյանի ֆլորայի համար: Հայտնաբերվել է Ջավախքի լեռնաշղթայի Աչքասար լեռնագագաթում ծովի մակարդակից 3000-3200 մ բարձրության վրա: Հայ-Իրանական տեսակ է: Ամենամոտիկ տարածման վայրը Լոռու ֆլորիստիկական շրջանն է:

Herniaria caucasica Rupr. – Հայաստանի ալպերում հազվադեպ հանդիպող արևելակովկասյան տեսակներից է [2]: Առաջին անգամ է դիտվում Հյուսիսային Հայաստանում: Հայտնաբերվել է Խալաբի լեռնաշղթայի վրա (Իջևանի շրջան) ծովի մակարդակից 2600-2700 մ բարձրություններում: Ամենուրեք հարմարված է խճաքարային լանջերին:

Minuartia sclerantha (Fisch. Et Mey.) Thell. - Առաջավորասիական այս տեսակը առաջին անգամ է նշվում Հայաստանի ֆլորայի համար: Իմ կողմից հայտնաբերվել է Իջևանի շրջանում Թեժ (Փամբակի լեռնաշղթա) և Խալաբ լեռնագագաթներին, որտեղ տարածված է ծովի մակարդակից 2600-3100 մ բարձրությունների վրա: Հարմարված է խճաքարային վայրերին: Անդրկովկասում հանդիպում է Հայաստանին հարակից արևելյան և հարավային շրջաններում [6]:

Dianthus inamoenus Schischk. – Նոր տեսակ է Դարալագյազի ֆլորիստիկական շրջանի համար: Հայտնաբերվել է Վարդենիսի լեռնաշղթայի հարավային մակրոլանջին ծովի մակարդակից 2800-2900մ բարձրության վրա: Անդրկովկասյան տեսակ է: Հայաստանում հանդիպում է նաև Մեղրիում, Խալաբի լեռնաշղթայում և Սյունիքի Արավուս գյուղի շրջակայքում: Հարմարված է քարքարոտ վայրերին:

Carex oreophila C.A.Mey. – Կենտրոնական Հայկական հրաբխային բարձրավանդակի ալպիական գոտում լայնորեն տարածված կովկասյան այս տեսակը առաջին անգամ է հիշատակվում Իջևանի ֆլորայի համար: Հայտնաբերվել է Թեժ լեռան գորգային համակեցություններում ծովի մակարդակից 3000-3100մ բարձրության վրա: Հյուսիսային Հայաստանում նրա

խիստ սահմանափակ տարածվածությունը հիմնականում պայմանավորված է այստեղ ալպիական գորգերի նվազ արտահայտմամբ, որոնցում և բացահայտվում են այս տեսակի ֆիտոցենոտիկ առանձնահատկությունները:

Oxytropis savellanica Bunge - Առաջին անգամ է նշվում Հյուսիսային Հայաստանի ֆլորայի համար: Հայտնաբերվել է Թեժ և Աչքասար լեռների գագաթամերձ հատվածների մարգագետնային և պետրոֆիլ բուսականության համակեցություններում: Մինչև այժմ իրանական այս տեսակի տարածման ամենահյուսիսային սահմանը եղել է Գեղամա լեռնաշղթան, որտեղ այն հանդիպում է Ակնա լճի շրջակայքում, Մեծ Սպիտակասար և Գեղմաղան լեռնագագաթների վրա՝ ծովի մակարդակից 2800-3400 մ բարձրություններում:

Corydalis alpestris C.A.Mey. – Հայաստանի բարձրալեռներում լայնորեն տարածված կովկասյան այս տեսակը հայտնաբերվել է Վարդենիս լեռան հյուսիսային մակրոլանջին միայն 1988 թ., որը մտնում է Սևանի ֆլորիստիկական շրջանի մեջ: Ամենամոտ տարածման վայրը Գեղամա շրջանն է:

Nepeta supina Stev. subsp. buschii (Sosn. et Manden.) Menitsky - Այս բուսատեսակը առաջին անգամ է նշվում Դարալագյազի ֆլորայի համար: Հայտնաբերվել է Վարդենիս լեռան հարավային մակրոլանջին ծովի մակարդակից 3300-3400մ բարձրության վրա: Հարմարված է քարացրոններին: Հայկական տեսակ է: Ամենամոտ տարածման վայրը Գեղամա լեռնաշղթայի Մեծ Սպիտակասար լեռնագագաթն է:

Dactylorhiza umbrosa (Kar. et Kir.) Nevski - Այս իրանա-թուրանական տեսակը Հայաստանի հազվագյուտ բույսերից է: Մինչև այժմ հայտնի էին այս տեսակի երեք պոպուլյացիաներ Լոռիում, Մեղրիում և Զանգեզուրում [2]: 1988 թ. Վարդենիս լեռան հյուսիսային մակրոլանջին, ծովի մակարդակից 2800-2900մ բարձրության վրա հայտնաբերվել է նաև չորրորդ պոպուլյացիան: Նորություն է Սևանի ֆլորիստիկական շրջանի համար:

Catabrosella araratica (Lipsky/) Tzvel. – Նորություն է Իջևանի ֆլորայի համար: Հայտնաբերվել է Թեժ լեռան գագաթամերձ տարածքում: Հայկական տեսակ է, տարածված է Կենտրոնական Հայկական հրաբխային բարձրավանդակի լեռնահամակարգում:

Alopecurus aucheri Boiss. - Ատրպատականի բարձրալեռնային գոտուն բնորոշ այս բուսատեսակը, որը լայնորեն տարածված է Մերձարաքսյան լեռնաշղթաների և Հայկական հրաբխային բարձրավանդակի լեռներում, առաջին անգամ է նշվում Հյուսիսային Հայաստանի համար: Այն նորություն է Վերին Ախուրյանի ֆլորայի համար, որտեղ հայտնաբերվել է Զավախքի լեռներում ծովի մակարդակից 2600-3200մ բարձրության վրա: Աճում է ինչպես մարգագետնային համակեցություններում, այնպես էլ քարքարոտ լանջերին:

Helictotrichon adzharicum (Albov) Grossh. – Հայաստանի տարածքում հանդիպող չափազանց հազվագյուտ կովկասյան այս տեսակը հայտնի էր միայն Սևանի ավազանում: 1989 թ. այն հայտնաբերվել է նաև Հյուսիսային Հայաստանի ֆլորիստիկական երկու շրջաններում Իջևանի (Թեժ լեռ) և Վերին Ախուրյանի (Զավախքի լեռնաշղթա): Նշված վայրերում այն հանդիպում է ծովի մակարդակից 2800-3100մ բարձրության վրա, հիմնականում մարգագետնային համակեցություններում:

Euphrasia juzepczukii Deniss. - Առաջին անգամ է նշվում Հյուսիսային Հայաստանի ֆլորիստիկական երկու շրջանների համար՝ Իջևանի (Մուրղուզ) և Վերին Ախուրյանի (Ջավախքի լեռնաշղթա): Ատրպատական այս տեսակի տարածման ամենահյուսիսային սահմանը դիտվում էր Արագած լեռը [2]: Ինչպես ամենուրեք, այնպես էլ հայտնաբերված նոր վայրերում այն հարմարված է ալպյան գոտու մարգագետնային և պետրոֆիլ համակեցություններին:

Potentilla agrimonioides Bieb. - Արևելակովկասյան այս հազվագյուտ տեսակը Հայաստանի տարածքում հայտնի էր միայն Սևանի և Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում: Առաջին անգամ է նշվում Իջևանի շրջանի համար: Հայտնաբերվել է Թեժ լեռան գագաթամերձ վայրերում: Աճում է փլուզուտներում:

Ամփոփելով ստացված արդյունքները, ակնառու է, որ հայտնաբերված նոր բուսատեսակների գերակշռող մասը բաժին է ընկնում Հյուսիսային Հայաստանի ֆլորիստիկական շրջաններին: Սա մեկ անգամ ևս հաստատում է Հայկական լեռնաշխարհի այս հատվածի բարձրալեռնային գոտու, մասնավորապես ալպիական ֆլորայի անբավարար ուսումնասիրվածությունը:

Մյուս կողմից, վերլուծելով Հյուսիսային Հայաստանում նոր բուսատեսակների ընդհանուր տարածվածությունը, պարզվում է, որ դրանց մեծ մասը հանդիսանում են առաջավորասիական աշխարհագրական տարրի ներկայացուցիչներ: Հաշվի առնելով այս հանգամանքը և նկատի ունենալով այն, որ Հյուսիսային Հայաստանը ամբողջապես ընդգրկված է Կովկասյան երկրամասում [4], կարելի է եզրակացնել, որ, առաջին, Հյուսիսային Հայաստանի ալպիական գոտու ֆլորան որոշակիորեն կրում է առաջավորասիական ֆլորայի ազդեցությունը, և, երկրորդ, անհրաժեշտ է վերանայել Կովկասյան և Հայ-Իրանական ֆլորիստիկական երկրամասերի սահմանները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Африкян К.Г.* Автореф. канд. дисс., Ереван, 1987.
2. *Балоян С.А.* Биолог. журн. Армении, *41*, 9, 756-760, 1988.
3. *Гусян К.Е.* В сб.: Научн. тр. Арм. Отд. ВБО "Флора, растительность и растительные ресурсы Армянской ССР", 8, 38-45, 1981.
4. *Тахтаджян А.Л.* Флористические области Земли, Л., 1978.
5. *Файбуш Г.М.* В сб.: Научн. тр. Арм.отд. ВБО "Флора, растительность и растительные ресурсы Армянской ССР", 8, 46-52, 1981.
6. Флора Армении, *3*, Баку, 1945.
7. Флора Армении, *5*, Ереван, 1966.

Ստացվել է 10.V.1991